ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«18» 04 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 03

Ձեռնարկողը՝ ***«Ֆեմիդա Գրուպ» ՍՊԸ***
Ք. Երևան, Տ. Պետրոսյան 40

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Տ. Պետրոսյան 40 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 03

«18» 01 2019թ.

<<Ֆեմիդա Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Տ. Պետրոսյան 40 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ò»éÝ³ñÏáÕ՝	<<Ֆեմիդա Գրուպ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ և կից նյութեր
Տեղադրման վայրը՝	ք. Երևան
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Ֆեմիդա Գրուպ>> ՍՊԸ-ն Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում՝ Տ. Պետրոսյան 40 հասցեում, սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող հողատարածքում, նախատեսում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Կառուցապատումը նախատեսվում իրականացնել համաձայն 14.06.2018թ. տրված N01/18-07/2-81291-430 ճարտարապետահատակագծային առաջադրանքի, անշարժ գույքի վկայականի /կադաստրային ծածկագիր՝ 01-004-0106-0937/ և կառուցապատողի առաջադրանքի հիման վրա:

Նախագծով նախատեսվում է կառուցել ստորգետնյա երկու հարկով և վերգետնյա 14, 16, 18 հարկերով բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Ստորգետնյա հարկերը նախատեսվում է օգտագործել որպես կայանատեղի: Առաջին և երկրորդ հարկերի տարածքները նախատեսվում է օգտագործել որպես հասարակական սպասարկման, ինժեներա-տեխնիկական և ադմինիստրատիվ սպասարկման տարածքներ:

Շենքերում նախատեսված են վերելակներ և հարմարավետ աստիճանավանդակներ:

Շենքի ճակատները իրականացվելու է սրբատաշ տուֆի երեսպատման սալերի և բարձրորակ սվաղի համադրությամբ: Տանիքները հարթ են, ջրահեռացումը՝ կազմակերպված: Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կատարվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝

հանույթ՝ 54000մ^3, հետլիցք՝ 8600մ^3: Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինարարության ընթացքում կառաջանան կենցաղային աղբ՝ 70-80կգ և շինարարական աղբ՝ 180մ^3 ծավալով, որը նախատեսված է տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված աղբավայր:

Ջրամատակարարումը կատարվելու է համաձայն <<Վեոլիա ջուր>> ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին:

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի, Տիգրան Պետրոսյան թիվ 40 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարարումը կիրականացվի բնական գազի G=720մ3/ժամ ծախսով Փիրումյան փողոցի միջին ճնշման D=325 մմ տրամագծի ստորգետնյա գազատարից տեխնիկական պայմանի համաձայն:

Նախնական գնահատման հայտը մշակելու պահին արդեն իսկ իրականացված են եղել նախապատրաստական և հողային աշխատանքներ:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա հնարավոր ազդեցությունը պայմանավորված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ.

- շինարարական հրապարակների ցանկապատում՝ անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում,
- շինանյութերի, ավելցուկ գրունտի և շինարարական աղբի տեղափոխում՝ ծածկված մեքենաներով,
- շինհրապարակի պարբերաբար ջրում,
- սորուն նյութերի (ավազ, ցեմենտ) պահեստավորում փակ տարածքներում, կամ թաղանթներով ծածկում,
- բուսածածկ տարածքներում շինարարական աղբի և հողերի կուտակումների բացառում,
- տեխնիկայի շարժիչների պարբերաբար կարգաբերում,
- չոր եղանակներին խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում՝ ջրցանման միջոցով,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքն իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքներն իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործման ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, որի ընթացքում ազդեցությունները թույլատրելի նորմերի սահմաններում են և կրում են ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում նախատեսվող գործունեության իրականացումն արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջ

Առաջացած թափոնների (շինաղբ, կենցաղային աղբ) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ֆեմիդա Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջան, Տ. Պետրոսյան թիվ 40 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Ա. Դոնոյան

Մասնագետ՝ Զ. Զուռնաչյան